«Մայր Հայաստան» կուսակցության նախընտրական ծրագիրը.

Վաղարշապատ խոշորացված համայնք

Միրելի՛ վաղարշապատցիներ,

Էջմիածին քաղաքի, Խոյ համայնքի, Ոսկեհատ գյուղի հարգելի՛ ընտրողներ,

«Մայր Հայաստան» կուսակցությունը **Վաղարշապատ** խոշորացված համայնքում ավագանու ընտրությունները գնահատում է որպես գործընթաց, որը կարող է նախադրյալներ ստեղծել Հայաստանի Հանրապետությունում **ամբողջական իշխանափոխության** համար:

Մենք հանձնառու ենք **պաշտպանել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին** օրվա իշխանությունների ադրբեջանահաճո ոտնձգություններից: Մեր ստորագրահավաք-ակցիան՝ ի պաշտպանություն Եկեղեցու, ստացել է հազարավոր էջմիածինցիների աջակցությունը:

Մեր նվազագույն խնդիրն այս ընտրություններում **«Քաղաքացիական պայմանագրին» իշխանազրկելն է,** առավելագույնը՝ **համայնքի կառավարման պատասխանատվությունը ստանձնելը:**

«Մայր Հայաստանը» վաղարշապատցուն ներկայանում է համայնքի ընթացիկ կառավարման և հեռանկարային զարգացման ծրագրերով:

. . .

Վաղարշապատի կենտրոնը համայն հայության հոգևոր մայրաքաղաք **Էջմիածինն** է, որն ունի ՀՀ ներգնա տուրիստական կենտրոններից մեկը դառնալու և արտերկրից հսկայական մարդկային

հոսք ապահովելու բոլոր նախադրյալները (Վատիկանի տարբերակներով): Այդ նախադրյալներն են՝

–Մայր Տաճար և Աթոռանիստ քաղաք,

–մշակութային հզոր ժառանգություն,

–ՀՀ մայրաքաղաքին մոտ լինելը,

–«Զվարթնոց» օդանավակայանին մոտ լինելը,

–բնակլիմայական բարենպաստ պայմանները:

Ընտրողների վստահության քվեին արժանանալու և համայնքային իշխանության ստանձնելու դեպքում կներդնենք բոլոր ջանքերը Էջմիածինը միջազգային մասշտաբով լայնորեն գովազդելու, տուրիստական ենթակառուցվածքների զարգացմանը նպաստելու համար:

Վերը նշված նպատակներն իրագործելու համար անհրաժեշտ են ինչպես տեղական, այնպես էլ համապետական մակարդակի քաղաքական, օրենսդրական, ենթաօրենսդրական փոփոխություններ: «Մայր Հայաստանը» պարտավորվում է ժողովրդի քվեն ստանալու դեպքում հետևողականորեն հասնել դրանց:

Համայնքի ընթացիկ կառավարումը ներառելու է՝

1. **Բյուջետային միջոցների արդյունավետ կառավարումը:**

Համայնքի կառավարման մեր սկզբունքներն են լինելու՝

-թափանցիկությունը,

-համատիրությունների գործունեության հանրային վերահսկողության իրականացումը,

-որոշումների կայացմանը հանրային մասնակցության ապահովումը,

-սոցիալական արդարությունը,

-կարգապահությունը և կոռուպցիոն ռիսկերի կտրուկ նվազեցումը,

-հանրային շահի պաշտպանության առաջնահերթությունը,

-շարունակական բարեփոխումները:

2. Տեղական տուրքերի ու վճարների ճկուն քաղաքականության միջոցով փոքր ու միջին բիզնեսի խթանումը:

3. Գյուղական համայնքներում գործող ջերմոցային տնտեսություններին հարկային տեռորի չենթարկելը. գյուղացիական տնտեսություններին իշխանությունը պետք է աջակցի կամ առնվազն չխանգարի:

4. Ասֆալտապատման իրականացումը. առաջիկա հնգամյակում համայնքային փողոցները պետք է լինեն բարեկարգ, Էջմիածին քաղաքը պետք է մաքրվի փոշուց և աղբից:

5. Համայնքային, միջքաղաքային և ներքաղաքային տրանսպորտային նոր որակի համակարգի ձևավորումը, որը ենթադրում է ժամանակակից տրանսպորտային ցանցի ներդնում՝ համայնք-մասնավոր համագործակցության տարբերակով՝ մատչելի գնային քաղաքականությամբ: Թոշակառուները, հաշմանդամները, պատերազմում զոհվածների ընտանիքների անդամները, Արցախից բռնի տեղահանվածները և ուսանողները պետք է ունենան անվճար կամ զեղչով երթևեկելու հնարավորություն: Գյուղերից դեպի Էջմիածին և Երևան փոխադրումը պետք է կրի կանոնավոր և քաղաքակիրթ բնույթ:

Ներքաղաքային տրանսպորտի աշխատանքային ժամերը պետք է սահմանվեն մինչև ժամը 23:00: Տրանսպորտային պարկը պետք է

ձևավորվի համայնքային միջոցների և արտաքին դոնորների ներգրավմամբ:

6. Փողոցային լուսավորության ապահովումը: Էջմիածնին լուսային փաթեթավորում տալը, այդ թվում՝ պատմամշակութային օբյկետների միջազգային ստանդարտներին համապատասխան լուսավորումը մեր առաջնահերթ խնդիրներից է:

7. Կանաչապատ նոր տարածքների ստեղծումը և դրանց շարունակական խնամքի ապահովումը:

8. Թափոնների վերամշակման և տեսակավորման ծրագրերի իրականացումը մտնում է առաջնահերթությունների մեջ: Աղբահանությունը պետք է լինի պատշաճ մակարդակի վրա: Նախատեսվում է շաբաթօրյակների պարբերական կազմակերպում:

9. Միջազգային լավագույն փորձի ներդրմամբ թափառող շների հիմնախնդրի լուծումը՝ ժամանակակից մեթոդներով և շատ կարճ ժամանակահատվածում:

10. Կրթական ոլորտում ներգրավված աշխատակիցների աշխատավարձերի բարձրացումը՝ տեղական բյուջեի անարդյունավետ ծախսերի վերացման և լրացուցիչ միջոցների ներգրավման հաշվին:

11. Երիտասարդության զարգացման հիմնադրամի ստեղծումը՝ երիտասարդների համար մշակելով կրթական ու բիզնես ոլորտներին վերաբերող հատուկ ծրագրեր:

12. Զբոսաշրջության զարգացման կենտրոնացված քաղաքականության իրականացումը, որի համար զարգացման լուրջ խթան կարող է դառնալ քաղաքային ենթակառուցվածքների զարգացումը, հյուրանոցային բիզնեսի խթանումը, զբոսանքի և

ժամանցի վայրերի բարեկարգումն ու նորերի ստեղծումը: Համայնքը գովազդային լրջագույն քաղաքականություն պետք է իրականացնի՝ Էջմիածնի զբոսաշրջային գրավչությունը բարձրացնելու նպատակով: Մասնավորապես՝ մշակութային, խոհարարական և ստեղծագործական փառատոնների կազմակերպում, մարքեթինգային արշավների իրականացում:

Հոկտեմբերի 8-ը՝ Էջմիածնի օրը, պետք է դառնա ոչ միայն էջմիածինցիների, այլ նաև հայության տոնական օրերից մեկը և խթանի զբոսաշրջությունը:

Զբոսաշրջության զարգացմանը կարող է նպաստել նաև «մշակութային միջավայրի» ձևավորումն ու զարգացումը:

Համայնքը պետք է խթանի զբոսաշրջային մասնավոր բիզնեսը:

13. Էջմիածնում «Խելացի քաղաքի» համակարգի ձևավորումը, որը նախատեսում է՝

-տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում,

-քաղաքի կառավարման թվայնացում,

–«E-governance» համակարգերի ներդրում,

-տեղական «IT» ընկերությունների և ստարտափերի համար բարենպաստ աշխատանքային պայմանների ստեղծում,

-համայնքային տարածքների խելացի կառավարում,

-«GIS» աշխարհագրական տեղեկատվական համակարգի ներդրում:

14. Համայնքային սեփականություն հանդիսացող **մանկապարտեզները պետք է լինեն անվճար:**

15. Գյուղական համայնքներում ոռոգման և խմելու ջրի ապահովման իրականացում՝ արդյունավետ համակարգի ներդրման միջոցով:

. . .

Գալիք հինգ տարիների ընթացքում պլանավորում ենք հետևյալ աշխատանքները՝

• վերականգնել Զվարթնոց թաղամասում առկա «Սատանի անիվ» կոչվող կարուսելը և անճանաչելիորեն բարեկարգել հարակից տարածքը՝ այն բերելով միջազգային ստանդարտների և դարձնելով հաճելի զբոսավայր ինչպես տեղացիների, այնպես էլ համայնքի հյուրերի համար,

• համայնքապետարանը կիրականացնի քաղաքային կոլորիտի մաս կազմող շենքերի ֆասադների ու կտուրների վերականգման աշխատանքներ,

• ավելացնել բարվոք վիճակում գտնվող բազմաբնակարանային շենքերի թիվը,

• իրականացնել բակերի բարեկարգման աշխատանքներ, այդ թվում՝ ստեղծել բակային ֆուտբոլի խաղադաշտեր,

• կահավորել փողոցները՝ ճանապարհային նշանների ավելացման միջոցով,

• նպաստել սպորտի զարգացմանը՝ համապատասխան կառույցների վերանորոգման կամ նորերի ստեղծման միջոցով,

• գյուղական ճանապարհային հատվածներում ստեղծել գյուղմթերքների իրացման ժամանակակից նոր փոքր շուկաներ,

- Արմատական լուծում տալ ոռոգման ջրի ապահովման համակարգին՝ նպաստելով գյուղատնտեսության զարգացմանը:

Հարգելի՛ ընտրող, Վաղարշապատը փոփոխությունների շեմին է: Պետք է կատարել արժանապատիվ և զարգացմանը միտված ընտրություն:

Միացի՛ր, որ փոխենք: